ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՎԵՐԱՀՍԿԻՉ - ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

08.04. 2017թ.

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ազգային Ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմանդրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքների

Ազգային ժողովի 2017թ. ապրիլի 2-ի ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը գրանցելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո՝ 7 օրվա ընթացքում նախընտրական քարոզչությանն ուղղված ծախսեր կատարելու նպատակով Կենտրոնական բանկում բացել են նախընտրական հիմնադրամներ:

Ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Կենտրոնական բանկից 3 աշխատանքային օրը մեկ, Կենտրոնական ընտրական հանձնաձնաժողովի Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն (այսուհետ՝ Վերահսկիչ – վերստուգիչ ծառայություն) ստացվել են տեղեկանքներ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում մուտքերի և ելքերի վերաբերյալ որոնց հիման վրա Վերահսկիչ – վերստուգիչ ծառայության կողմից կազմվել են ամփոփ տեղեկանքներ և տեղադրվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Տեղեկանքներն իրենց մեջ ներառել են

տեղեկություններ կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում կատարված մուծումների և ելքերի չափերի, դրանց ժամանակագրության, ինչպես նաև հիմնադրամում մնացորդների վերաբերյալ:

Ընտրական օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն բոլոր կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո 10-րդ օրը, 20-րդ օրը և ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ քան 3 օր առաջ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն են ներակայացրել իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերը և պայմանագրերը: Հայտարարագրերն իրենց մեջ տեղեկություններ են ներառել նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց ժամանակագրության, ընտրական օրենգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերի և դրանց ժամանակագրության, ձեռքբերման ծախսերը հավաստող փաստաթղթերի, դեռ չվճարված պարտավորությունների չափերի, ինչպես նաև հիմնադրամի միջոցներից վճարված, սակայն հայտարարագրման ոչ ենթակա ծախսերի մասին: Հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, տեղադրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը նախընտրական հիմնադրամներում մուծումների և ծախսերի վերահսկողությունն իրականացրել է՝

-Կենտրոնական բանկից ստացված տեղեկանքների

-Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացված հայտարարագրերի

-Հիմնադրամից կատարված ծախսերը հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի

- Ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստացված տեղեկությունների ուսումնասիրության հիման վրա:

Ընտրական օրենգրքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Ազգային ժողովի յուրաքանչյուր խմբակցություն Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունում նշանակել է Հայաստանի Հանրապետությունում աուդիտորի որակավորում ստացած մեկ աուդիտորի, որոնց հնարավորություն է ընձեռնվել ուսումնասիրել նախընտրական քարոզչության ֆինանսավորմանը վերաբերվող բոլոր փաստաթղթերը:

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ 07.04.2017թ-ին Կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկանքների և կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից 06.04.2017թ.-ին ներկայացված հայտարարագրերում տվյալների միջև առկա են տարբերություններ: Համադրելով Կենտրոնական բանկից ստացված տեղեկանքները հայտարարագրերի հետ՝ պարզվեց, որ այդ տարբերություններն առաջացել են հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ ծառայություն մատուցող սուբյեկտների կողմից գումարների վերադարձի արդյունքում: Մասնավորապես՝

- «Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամում առկա է 24.800 դրամի տարբերություն, որն առաջացել է ծառայությունների դիմաց արդեն վճարված, սակայն ծառայությունների թերի կատարման հետևանքով գումարների հետ վերադարձի արդյունքում.
- Հայաստանի Հանրապետական կուսակցության նախընտրական հիմնադրամում առկա է 767.068 դրամի տարբերություն, որն առաջացել է ծառայությունների դիմաց արդեն վճարված, սակայն ծառայությունների թերի կատարման հետևանքով գումարների հետ վերադարձի արդյունքում.
- Հայաստանի Կոմունիստական կուսակցության նախընտրական հիմնադրամում առկա է 835.000 դրամի տարբերություն, որն առաջացել է ծառայությունների դիմաց արդեն վճարված, սակայն ծառայությունների թերի կատարման հետևանքով գումարների հետ վերադարձի արդյունքում.
- «Օհանյան-Ռաֆֆի-Օսկանյան» կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամում առկա է 65.260 դրամի տարբերություն, որն առաջացել է ծառայությունների դիմաց արդեն վճարված, սակայն ծառայությունների թերի կատարման հետևանքով գումարների հետ վերադարձի արդյունքում.

- Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության նախընտրական հիմնադրամում առկա է 172.000 դրամի տարբերություն, որն առաջացել է ծառայությունների դիմաց արդեն վճարված, սակայն ծառայությունների թերի կատարման հետևանքով գումարների հետ վերադարձի արդյունքում:

ՈՒսումնասիրության արդյունքում պարզվեց նաև, որ նախընտրական հիմնադրամներում առկա է ընտրական օրենգրքով սահմանված սուբյեկտների կողմից նախընտրական հիմնադրամում մուծված գումարի առավելագույն չափի գերազանցում: Մասնավորապես՝

- Հայաստանի Հանրապետական կուսակցությունը նախընտրական հիմնադրամ է մուծել 100.030.000 դրամ: Ընտրական օրենգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրավունք ունեն նախընտրական հիմնադրամում մուծումներ կատարելու առավելագույնը նվազագույն աշխատավարձի 100.000-ապատիկի չափով գումար՝ այսինքն 100.000.000 դրամ: Ընտրական օրենգրքի 26-րդ հոդվածի, 7-րդ մասի համաձայն առավելագույն չափը գերազանցող 30.000 դրամը փոխանցվել է պետական բյուջե:

Ընտրական օրենգրքի 27-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կատարվող բոլոր գործառնությունները դադարեցվել են քվեարկության օրվանից:

Ընտրական օրենգրքի 27-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների դիմումների հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է հիմնադրամից վճարումներ կատարել նաև քվեարկության օրվանից հետո, բայց մինչև քվեարկության օրը կատարված գործարքների համար: Մասնավորապես՝

- «ԵԼՔ» կուսակցությունների դաշինքի կողմից 05.04.2017թ.-ին մարվել է 1.807.950 դրամի պարտավորություն.
- «Ծառուկյան» կուսակցությունների դաշինքի կողմից 05.04.2017թ.-ին մարվել է 1.151.580 դրամի պարտավորություն.

- Հայաստանի Հանրապետական կուսակցության կողմից 05.04.2017թ.-ին մարվել է 6.848.177 դրամի պարտավորություն.
- «Օհանյան-Ռաֆֆի-Օսկանյան» կուսակցությունների դաշինքին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է մարել 61.200 դրամի պարտավորություն, որը 07.04.2017թ.-ի դրությամբ դեռ մարված չէ:

Նախընտրական քարոզչության և դրանից հետո ընկած ժամանակահատվածում նախընտրական քարոզչության ֆինանսավորմանը վերաբերող դիմում – բողոքներ չեն ստացվել:

Համադրելով Կենտրոնական բանկից ստացված տեղեկանքները կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ստացված հայտարարագրերի, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի հետ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը *փ ա ս տ ու մ է*, որ.

Բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացված՝ նախընտրական հիմանդրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի
վերահսկիչ-վերստուգիչ ծառայության պետ՝ Տ.Բաբիկյան